

Յովնան պարզ էր, բայց պարզամիտ չէր, երիտասարդին, որ այսպես քաղցրութեամբ կը խոսէր՝ նայեցաւ աչքին խորը հետաքննին կերպով եւ ամենայն ցրտութեամբ ու տխրութեամբ ըսաւ.

— Իշխան, դու շատ սրամիտ երիտասարդ մը կ'երեւաս, ինձ հետ այդպիսի խորախորհուրդ հնարիմացութեամբ խօսելու պէտք չի կայ. եթէ կարենայի այդ քու ըսածդ ընել՝ ժողովուրդը պատրաստել եւ կարելոր ժամուն ոտք հանել թէ այդ իւր յիմար տերանց դեմ, թէ այդ օտարահաւատ բռնաւորաց դեմ՝ այս թոպէիս կ'ընէի, բայց այդ լեռը շարժելու հաւատք եւ կարողութիւն վերի գառամեալ եւ ողորմելի ծերուն ձեռքն է. ի՛նչ օգուտ, նա էլ այդ իւր զօրութիւնը չի ճանչեր եւ չի գիտեր ազգին օգտակար ընել: Իսկ այդ յիմար իշխանները, որ ինձի դեմ կը գոռային կամ կը մռնչէին, հինգ տարի ժամանակ չեմ տար իրենց, մէկ հատ մը պիտի չի մնայ, որ Բաղդատու ճամփան չափած չլինի, եւ չեմ գիտեր քանի՞ հատը իւր Զրիստոսը Մահմեդի հետ չի փոխէ: Ղեւո՛նդ, Ղեւո՛նդ, ո՛ւր ես, Յայաստան քեզ պէս մեծ մարդ, մեծ քահանայ, մեծ Զրիստոսի ծառայ մէկ հատ մը միայն բերաւ, ափսո՛ս, եւ հոն իւր ծննդական կարողութիւնը դադրեցաւ:

Յովնան եղբայր,— ըսաւ երիտասարդ իշխանը,— ինչո՞ւ այդպէս կը յուսահատիս, համբերել, սպասել, պարադաներէն օգուտ քաղել իմաստուն եւ հեռատես մարդուն առաքինութիւնն է: Տե՛ս, ահա այդ մեր օտարահաւատ թշնամին՝ թեպէտ զօրաւոր օրաւոր կը հալի՝ թեպէտ ահագին աշխարհաց ընդարձակութեան վրայ կը տարածէ իշխանութիւնը՝ բայց օրաւոր կը տկարանայ, եւ իւր մեջէն բաժնուելով պիտի կործանի:

— Ո՛վ երիտասարդ, դու կը տեսնես թշնամուոյն իյնալը, կը մոռնաս, չես տեսներ քու փճանալդ, քու ոչնչանալդ, դու՛ թէ որ միջոց ունենայիր ինքզիսքդ անվթար պահպանելու՝ ես էլ քեզի հետ նոյնպէս կը միսիթարուէի:— Թողունք այս ողբալից խօսակցութիւնը, ի գործ դիր ի՛նչ հրաման որ ունիս մեծաւորներեդ:

— Ազատ ես երթալու ո՛ւր որ կամք ընես, ընելու ի՛նչ որ ուզես: